ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 13.06.2018թ. ԹԻՎ 444-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

22 հունիսի 2018թ,
ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արսեն Կարապետյան ռադիոլոկացիոն համակարգերի կենտրոնի ղեկավար

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Դավիթ Սարգսյան շենքերի և շինությունների շահագործման բաժնի գլխավոր մասնագետ
Տիգրան Ղուկասյան ռադիոլոկացիոն համակարգերի կենտրոնի առաջատար ինժեներ

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Աշոտ Քալոյան շենքերի և շինությունների շահագործման բաժնի պետ
Էլմիրա Չախոյան դիտարկման ծառայության ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Եսայան պլանավորման և գնումների համակարգման ծառայության մասնագետ

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ ըստ չափաբաժինների՝

Հ/հ	Անվանում	Գին (ՀՀ դրամ)
1	**Դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքներ**	**31 386 380**
2	**<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ**	**19 695 840**

Հրապարակվեցին www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները՝

«Մավշին» ՍՊԸ
«ՄարտՇին» ՍՊԸ
«Դը Բեստ Շին» ՍՊԸ
«Դավիթ Էներջի» ՍՊԸ
«Բիդեք» ՍՊԸ
«Էլիտ Հիլզ» ՍՊԸ

Հանձնաժողովը արձանագրեց՝

1. «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ այլ մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
   Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով նախատեսված փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2. «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ **«Էլիտ Հիլզ»** ՍՊԸ կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի հավելվածներ 2, 2.1 և 3-ը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ:

Հայտարարվեցին մասնակիցների գնային առաջարկները՝ըստ չափաբաժինների (ՀՀ դրամ, առանց ԱԱՀ)՝

Հ/Հ	«Մավշին» ՍՊԸ	«ՄարտՇին» ՍՊԸ	«Դը Բեստ Շին» ՍՊԸ	«Դավիթ Էներջի» ՍՊԸ	«Բիդեք» ՍՊԸ	«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
1	23320000			58800000	25035000	
2		12250000	15600000		15490000	16180000

Հանձնաժողովը արձանագրեց՝

1. «Դավիթ Էներջի» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումն իրականացնելու համար Ընկերության կողմից նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Ըստ չափաբաժինների 1-ին և 2-րդ տեղը զբաղեցրած մասնակիցներ ճանաչել համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

Հ/հ	*1-ին տեղ*	*2-րդ տեղ*
1	**«Մավշին» ՍՊԸ**	**«Բիդեք» ՍՊԸ**
2	**«ՄարտՇին» ՍՊԸ**	**«Բիդեք» ՍՊԸ**

2. 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել սույն արձանագրությունը ուղարկելու միջոցով՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:
3. Հանձնարարարել գնման համակարգողին ներկայացնել հարցում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
4. Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան սույն ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում:

Արսեն Կարապետյան

Դավիթ Սարգսյան

Տիգրան Ղուկասյան

Աշոտ Քալոյան

Էլմիրա Չախոյան

Մարիամ Եսայան